ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

20 հունիսի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արշակ Սրապյանը, Արայիկ Քոչարյանը, Գրիգոր Կարապետյանը, Պավլիկ Պապինյանը, Սերյոժա Սարդարյանը, Արմենուհի Ոսկանյանը Շուշանիկ Հակոբյանը և Էմմա Գասպարյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Թիանա Բոջուկյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակա ավագանու անդամներ չկան՝

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 15 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 9-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

Քվեարկությամբ, կողմ՝ 15 ձայների համաձայնությամբ որոշման նախագիծն ընդգրկվեց օրակարգում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:

Քվեարկությամբ, կողմ՝ 15 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 066-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի հունիսի 20-ի թիվ 05 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025-2027թթ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

3. Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

8. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2025-2027թթ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի 2025-2027 թվականի ՄԺԾԾ-ն կազմվել է հիմք ընդունելով համայնքի 2022-2026 թվականների զարգացման ծրագրի գերակայությունները, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:
Համայնքի ՄԺԾԾ պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք վերջին երեք տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: Այն համայնքի բյուջեի երեք տարվա պլանավորում է, որը նպատակաուղղված և պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 067-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող, պետության և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով, մրցույթների կազմակերպման համար առաջարկվում է ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.
Արտակ Օհանան - քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ

Էդմոն Բաղդասարյան - քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ
Անուշ Կոդոշյան - քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ
Սերյոժա Սարդարյան - ավագանու անդամ
Սևակ Խաչատրյան - ավագանու անդամ
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 068-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:6
Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկում է նախագծով ներկայացված 4 լոտ հողամասերին ավելացնել ևս 2-ը և տալ հավանություն 6 լոտ հանամասերն աճուրդ-վաճառքով օտարելուն, ինչպես նաև 5 լոտ հողամասերը վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով տրամադրելուն:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 069-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ 2024 թվականի մայիսի 08-ից մինչև հունիսի 13-ը համայնքի բյուջեի միջոցների հաշվին ձեռք է բերվել գրասենյակային գույք, ավարտվել են նաև շինարարական աշխատանքներ ընդհանուր 130.918.760 ՀՀ դրամ արժողությամբ: Անհրաժեշտ է այն ընդգրկել գույքագրման ցանկում:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 070-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ անհրաժեշտություն է առաջացել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակն ավելացնել 1՝ աղբատար մեքենայի բանվորի հաստիքով և նրա պաշտոնային դրույքաչափը սահմանել 108000 ՀՀ դրամ: ՈՒԺը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 14.11.2023թ-ի 120-Ա որոշման 4-րդ կետը:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 071-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքապետարանի աշխատակազմում ընդգրկված են 14 վարչական կենտրոն, որոնցից միայն 3-ում է առկա հավաքարարի հաստիք, անհրաժեշտություն է առաջացել աշխատակազմի հաստիքացուցակում ավելացնել ևս 3 հավաքարարի հաստիք: Միաժամանակ Լեռնապատի վարչական շենքի և հանդիսությունների սրահի համար նախատեսել մեկական բակապահի հաստիք:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 072-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի «Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը դիմել է լիցենզավորման համար, որը մերժվել է կանոնադրության մեջ հաստատության հասցեի սխալի պատճառով: Կանոնադրության հավելվածում Փամբակ համայնք գ. Ձորագյուղ 8-րդ փող. 4/ա նախկին հասցեն փոփոխել Փամբակ համայնք գ. Ձորագյուղ 8-րդ փող. 4/1 հասցեի:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 073-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2024 թվականի սեպտեմբերի 12-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, ընդունվեց որոշում */կցվում է որոշում N 074-Ա/:*

Փամբակ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2024 թվականի սեպտեմբերի 12-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ